Հինգերորդ տարի № 22 8 Յունիսի 1886

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԱՒԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՔ

Տարեկան բաժանորդագինն է հինգ րուբլի: Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔԻ» խմբագրատան և կենտրոնական Գրավաճառանոցում: Օտարաքաղաքայիք դիմում են՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ".

Առանձին համարները 10 կ. Յայտարարութիւնների բառին 2 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ Հոգևորականութեան նիւթական ապահովութիւնը: Տարեգարձ Սահմանագրութեան:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մի ձեռագիր աւետարան:—ՖԵԼԻԵՏՕՆ: Սամուէլ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀԱՅՑ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

II

Հայ Հոգևորականութեան հասոյթը կայանում է միմիայն նորա ծուխի կամաւոր նուէրներից: Ոչ մի տերութիւն, որի հովանաւորութեան ներքոյ գտնուել է և կամ այժմ գտնվում է հայ ազգը, միանգամայն չէ մասնակցել և չէ մասնակցում հայ հոգևորականութեան նիւթական ապահովութեան խնդրին, միանգամայն թողնելով այդ բանը ազգիս հոգևոր վարչութեանը և նորա հօտին: Թէև՝ ըստ մեր եկեղեցական կանոնաց՝ ամենայն ծխականատարութիւն, սկսած մկրտութիւնից, պսակից և թաղումից մինչև տունօրհնէքը և գերեզմանօրհնէքը, բոլորն էլ պիտի կատարուին ձրի, և ոչ մեկի համար քահանայն իրաւունք չունէ պահանջել որոշ վարձ և կամ առաջուց սակարկութիւն անել, բայց ամեն մի արարողութեան համար ժողովուրդը կարող է կամաւոր նուէրներ տալ իւր ծխականատար քահանային: Եկեղեցական կանոնադրութիւնը մեզանում արգելում է հոգևորականաց որ և է վարձ կամ նուէր ստանալ միմիայն խոստովանութեան և հաղորդութեան համար, որ սակայն միւս ազգերի մէջ ընդունուած է: Այսուամենայնիւ՝ հոգևորականաց ապահովութեան խնդիրը միշտ զբաղեցրել է մեր սրբազան հարց, և ազգային եկեղեցական ժողովները առանձին նշանակութիւն են տուել դորան, բաւականաչափ կանոններ սահմանելով:

Եթէ առ այժմ վեր առնենք միմիայն քահանայից հասոյթի խնդիրը, կը տեսնենք, որ առաջին հոգսը այդ մասին տարել է նոյն իսկ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Հայաստանեայց մէջ քրիստոնէութիւն տարածելու միջոցին: Ագաթանգեղոսի ասելով, երբ ժողովուրդին մկրտելուց յետոյ, Լուսաւորիչը ամեն տեղ՝ թէ գիւղերում և թէ քաղաքներում՝ եկեղեցիք շինեց և քահանայք կարգեց, Տրդատ թագաւորը և ս «յամենայն իշխանութեան իւ- « րում առ հաստարակ՝ գրեաց չորս չորս հողս յամե- « նայն յազարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն « երդոյ հող, 'ի ծառայութիւն սպասաւորութեան « եկեղեցւոյ նուէր պտղոց Տեառն մատուցանել»: Թէ իսկապէս որքան էր այս հողի չափը կամ քանակութիւնը—դժուար է ասել, սակայն ներկայումս մեզ համար այն է նշանաւոր, որ քահանայապետը աշխատել է ապահովացնել եկեղեցւոյ սպասաւորներին նախ և առաջ հողի արդիւնքով, և այդ բանը կատարուել է մարմնաւոր իշխանութեան օրէնսդրութեամբ, այն է՝ թագաւորի հրամանաւ: Յետագայ եկեղեցական կանոնադրութիւններից իմանում ենք, որ ծխական եկեղեցւոյ հողը միշտ սեփականութիւն է եղել եկեղեցւոյ և սրբատուղը վայելում են եղել ծուխը հովանաւոր քահանայք մինչև այն ժամանակ, քանի որ կատարելիս են եղել դոքա իրանց պաշտօնը: Բայց որովհետև հողի արդիւնաբերութիւնը կախումն ունէ նորա մշակութիւնից, բնականապէս քահանայն և ս երկրագործ նման պիտի ջանք գործ դնէր եկեղեցապատկան հողը արգաւանդելու, որի համար թէ աշխատութիւն էր հարկաւոր և թէ ծախս: Գիւղական ծխատէր քահանայն, մինչև իւր մահը միևնոյն հողի մէջ գտնելով իւր ապրուստը, փոքր առ փոքր պիտի ընտելանար սեփականութեան գաղափարի հետ, և զարմանք չէ, որ նա, երեսուն, քառասուն տարի ջանք թափելով այդ հողի մշակութեան համար, տարած էր իւր իրաւունքը նորա եկամուտի վերայ ժառանգական սեփականութեան տեսակէտից: Իսկ որովհետև այդ անկարելի էր, վասնորոյ միջին դարերում յառաջ էր եկել այն սովորութիւնը, որ մեռնող քահանայի տեղ պիտի քահանայ ձեռնադրուէր նորա որդին կամ նորա ազգականներից մեկը: Սա մի ելք էր, առանց եկեղեցա-

կան կանոնագրութիւնը խախտելու, հողը միևնոյն տոհմի մէջ ժառանգաբար սեփականութիւն պահելու համար։ Այս սովորութիւնը, որի մասին խօսվում է նաև Մխիթար Գօշի Դատաստանագրքի մէջ, մինչև հիմայ էլ, ինչպես պիտի տեսնենք, պահվում է կամ գէթ աշխատում են պահել հայաբնակ շատ գիւղերում։ Սորա հետ սերտ կապ ունէ նաև հանգուցեալ քահանայի այրի երեցկնի և որբոց ապրուստի խնդիրը։ Եթէ ինքը քահանան շատ աշխատանք ունէր իւր վայելած եկեղեցապատկան հողի արդիւնաբերութեան վրայ, ապա պէտք է կարծել այդ չանքի մէջ նաև նորա ամբողջ գերդաստանի մասնակցութիւնը։ Եւ երբ քահանայի մահով վերջանում է թէ հողից և թէ ծխականութիւններից ունեցած արդիւնքը, հարկաւ, որը և այրի գերդաստանը պիտի զրկուէր ապրուստի ամենայն աղբիւրներից։ Ժառանգաբար քահանայական պաշտօնավարութեան օգուտը այն էր, որ որդին հօր տեղը քահանայանալով և ուրեմն շարունակելով նոյն արդիւնքները վայելել, այրին և որբերը մնում էին առաջուայ ապահովութեան մէջ։ Ժառանգաբար պաշտօնավարութեան այդ միայնակ օգուտը, բարեբախտաբար, մեր եկեղեցական հարց կողմանէ շատ չնչին է ճանաչուել՝ համեմատութեամբ այն չարիքների, որ ծնանում էին այդ սովորութիւնից։ Եթէ մեր օրերում ծերունի քահանայք բաղձային իւրեանց տոհմից մէկին քահանայ տեսնել, իբրև իւրեանց պաշտօնը ժառանգող, և ապա մեռնել, այդ իղձը, ներելի է կարծել. անարժանաց վերաբերութեամբ արժէք չըպիտի ունենայ ոչ մի բարձրագոյն հոգևոր վարչութեան աչքում։ Գոնէ եկեղեցական պաշտօնավարութեան ժառանգականութեան մասին մեր հարց կանոնագրութեանց մէջ մենք գտնում ենք մի շարք խիստ հակաօրէնքներ. իսկ երեցների որբոց և այրեաց հոգատարութեան համար նոյն սուրբ հարք սահմանած ունին «որբոց և այրեաց» անուանեալ գանձարանը, կամ ապահովութեան աղբիւրը, որի մասին—յետոյ։

Հարկ կայ միթէ ասել, որ ազգիս բազմադարեայ և բազմաչարչար վիճակում՝ եկեղեցական պաշտօնէից հողով ապահովացնելու խնդիրը տեսակ տեսակ փոփոխութեանց է ենթարկուել, նայելով երկրին, տեղին, վարչութեանը և, վերջապէս, ժողովուրդի վայելած հողերի ու ապրուստների քանակութեանը։ Մեր ժողոված բազմաթիւ տեղեկութեանց վրայ հիմնուելով, պիտի ասենք 'ի պարծանս հայ ազգի, որ, չը նայելով սորա կրած անթուելի յեղափոխութեանց, այնու ամենայնիւ հինօրեայ աւանդով և գրեթէ Ս. Լուսաւորչի և մեծին Տրդատի սահմանած օրէնսդրութեամբ, հայրենիքի մէջ ապրող գիւղացի հայք ամեն տեղ, առանց ստիպման և առանց մարմնաւոր իշխանութեան միջամտութեան, որոշած ունին քահանայից ապրուստի համար որևէ քանակութեամբ հող, իբրև հիմնաքար իւրեանց հովուաց ապահովութեանց համար։

Հազարաւոր նեղութիւններ կրած և այսօր ամէն կերպ նիւթական պակասութիւններ կրող գիւղացի հայ ժողովուրդը, գրեթէ իւր որդւոց հացը խլելով, այս դժուար և անձուկ ժամանակներում, լոկ իւր բարեպաշտութիւնից դրդուած, համայնքից վայելած սակաւաթիւ հողերի մի մասը յատկացրած է քահանային։ Ռուսաստանում, ուր քրիստոնեայ հոգևորականութեան վերաբերութեամբ օրէնսդրութիւնը բազմաթիւ յոդուածներ ունէ, մենք տեսնում ենք, որ գիւղական քահանայից ապահովութիւնը՝ հողով կամ որ և է որոշ աղբիւրով՝ տակաւին ամենայն նահանգաց վրայ չէ տարածուած։ Կովկասի աշխարհների վերաբերութեամբ միայնակ մի օրէնք է հրատարակուած 1869 թ. ապրիլի 26-ին, որով Կուբան երկրի կօզակների Զերնօմօրիայի կողմը վայելած հողերը հրամայվում է բաժանել հինգ կարգի։ Առաջին կարգի հողատէր գիւղացւոյ ամեն արական հոգին պիտի ստանայ 16 դեսեատին հող, երկրորդը—$17\frac{1}{2}$ դես., երրորդը—$21\frac{1}{2}$, չորրորդը—26, և հինգերորդը—30 դեսեատին հող։ Այդ ժողովուրդը հովուող քահանայն պիտի ստանայ 60 դեսեատին հող, սարկաւագը—45, դպիրը՝ 30 և այլն։ Յիշեալ պաշտօնեայք պիտի վայելեն այդ հողերի արդիւնաբերութիւնը, քանի որ կրում են իւրանց պաշտօնը (Полн. собр. закон. т. XLIY. отд. I-е, 1869, № 47011)։ Այսպիսի, կամ որ և է սորա նման, օրէնք, Ռուսաց կառավարութիւնը տակաւին չէ գործ դրած Անդրկովկասի կողմերում օրթոդոքսի ոչ բուն ռուս և ոչ վրաց հոգևորականութեան վերաբերութեամբ, և այսօր երկրիս մէջ մեր դրացի վրացի քահանայք գիւղերում գրեթէ նոյն կացութեամբ են, ինչպես և հայ հոգևորականութիւնը։

ՏԱՐԵԴԱՐՁ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Քսան և վեց տարիէ ի վեր Թուրքիոյ Հայ ժողովուրդն կը կառավարուէ առանձնաշնորհեալ սահմանադրական վարչութեամբ, որմէ գուրկ են Թուրքիոյ միւս հպատակ ազգերն։

Սահմանադրութեան հաստատումէն առաջ Թուրքիոյ Հայոց հանրային կազմակերպութիւնն ունէր անորոշ կացութիւն մը։ Գրեթէ ամեն ազգային—հանրական խնդիր, կարևորագոյնէն մինչև անկարևորն, պատրիարքական ընտրութենէն մինչև հասարակ ուսուցչի մ'ընտրութիւնն՝ հայ ամիրաներու, իշխաններու և բռնակալներու մենաւաճառն եղած էր։ Մի պետութեան մէջ միապետութիւն։ Սահմանադրութիւնը վերջ տուաւ այս անորոշ, խառնուշփոթ վիճակին և իւր հաստատութեամբ ազգային ամեն գործերու համար առանձին օրէնք, առանձին սահման նշանակեց, որով ազգային-հանրական ամեն գործ կամ պաշտօն գտաւ իւր իրաւասութեան սահման ու ասպարէզն գործունէութեան։ Բնականաբար այսպիսի նորամուտ օրէնսդրութիւնն անկարող էր քիչ ժամանակի մէջ հիմունք գտնել ժողովրդի մէջ, որ ամեն կողմէ անպատրաստ էր իւրացնելու այդպիսի սահմանադրութիւն մը, մանաւանդ որ Սահմանադրութեան նը-

պատակ և ոգին կատարելապէս ըմբռնող քիչ կար, այն ևս ի Կ. Պոլիս, իսկ գաւառներու մէջ՝ բնաւ։ Սահմանադրութեան սկսեալ ժամանակ եթէ ազգային վարչութիւնը խորհելու լինէր պատրաստել Սահմանադրութեան օրինաց Հմուտ անձինք և ապա այդ օրէնքն եթէ իբրև դաս աւանդուելու լինէր կրթարաններու մէջ, այժմ ուշնեցած կը լինէինք քիչ շատ բարւոք Սահմանադրութիւն և բնականաբար բազմապատիկ արդիւնք, քան զոր մինչև այժմ կրցած է յառաջ բերել ներկայ Սահմանադրութիւնն։ Սակայն և այնպէս, պէտք է յոյժ գոհ և շնորհակալ լինինք մենք Թուրքիոյ Հայերս, որ, շնորհիւ Սահմանադրութեան, ունինք ազգային տօնախմբութիւն, հանդէս, ուր ժողովուած կը տեսնուին տասնեակ հազարներով հայեր Հայաստանի ամեն կողմերէն։ Այդ ահագին ամբոխի մէջ միայն կը լսես մայրենի լեզուի հնչիւնն, Եւրոպական նուագածութեան հետ կը լսես հայ մանկանց բերնէն հայրենի երգեր, կը տեսնես այս ու ու այն սրճարանի ճակատին Հայոց պատրիարքի պատկերն, դաբնիներով զարդարուած, չորս կողմն կարմիր դրօշակներ, որ կը ծածանին Մարմարայի հեզաշունչ զեփիւռէն և այդ դրօշներու միջև կը տեսնես՝ «Կեցցէ Ազգային Սահմանադրութիւնն» ոսկետառ բառերն։ Այս ընդհանուր տեսարաններն ևս հոգեկան քաղցրութիւն մ՝են Հայի պէս զրկեալ, կարօտ ու փառազուրկ ազգի մը համար։ Ինչպէս ամեն Հայի, նոյնպէս և ինձ համար, անտարակոյս, փափագելի էր ներկայ գոնուիլ ազգային այս մեծ հանդէսին. ուստի երկու օր առաջ, կիւրակէ Մայիսի 25-ին, առաւօտեան ժամ 10-ին շտապեցի Ազգային Ս. Փրկչի Հիւանդանոցն, ուր սովորաբար կը կատարուի Սահմանադրութեան տարեդարձի հանդէսն։ Անցնելով Ղալաթիոյ կամուրջէն, որ կը ձգուի ոսկեղջիւրի մի կողմէն մինչև միւսն և որ իրար հետ կը միացնէ բուն Կ. Պոլիսն (Ստամբուլ) Ղալաթիա և Պերա Եւրոպացիներէ և Հայերէ բնակեալ քաղաքամասին հետ, հասայ «Ադրիանապօլսոյ երկաթուղւոյն կայարանն», որ կը գտնուի Բ. Դրան մեծ փողոցի վարի ծայրն, Կ. Պոլսոյ Նաւահանգիստի վրայ։ Կայարանի առաջ, պարտէզի մէջ ամենուրեք խառնուած կ՝երևէին հարիւրաւոր Հայեր Կ. Պոլսի և Հայաստանի միջին և ստորին դասերէն. չորրորդ կառընթացն էր, որ հանդիսականներ կը փոխադրէր Տարեդարձի Հանդիսավայրն։ Այս կառախումբ, որ կազմուած 60—70 կառքերէ, քառորդ ժամուան մէջ լցուեցաւ բազմութեամբ մինչև այն աստիճան, որ երկաթուղիի վարչութիւնը հեռագրեց միւս կայարաններուն՝ ուղևոր չ՝ընդունիլ։ Երկայնաձիգ կառախումբն սկսաւ շարժիլ, երկու րոպէ չանցած հասանք ճիշտ այն տեղն, ուր երբեմն կը բարձրանար նախկին Բիւզանդիոնը, աջ կողմէն կ՝սկսին երևիլ փողերանոցն, Կայսերական բժշկական վարժարանը, Սուլթաններու նախկին պալատն, Այա-Սոփիա և հարիւրաւոր մզկիթներու գմբեթներն ու մինարէներն, իսկ ձախ կողմէն կ՝երևի Կ. Պոլսոյ Նաւահանգիստն, Իւսկիւտար, նախնի Քաղքեդոնն և այլ բազմաթիւ արուարձաններ։ Շոգեկառքն կանգ կ՝առնու Գում-Գափու թաղի մօտ, ուր կը գտնուին Կ. Պոլսոյ Հայոց Մայր եկեղեցին և Պատրիարքարանն, որոց երկուքի ևս շինուածքն պատուաբեր չէ հայ անուան։ Շոգեկառքն, առանց կանգ առնելու, կ՝սլանայ, կանցնի Ենի Գաբու, Սամաթիա և Եմի Գուլէ թաղերն։ Կանցնի Եմի Գուլէի պարսպագունէն և ահա փոքր ինչ հեռուէն գրեթէ քառակուսի ձևով կոկսի տեսնուիլ Եմի-Գուլէի եօթն աշտարակներն, որոնք մի ժամանակ պատմական նշանաւոր դեր կը խաղային։ Այստեղ կը նստէին զինուորական բարձրաստիճան պաշտօնատարներ. նա Պօլսոյ Ի դուռներէն մին է, որ կը կոչուէր՝ «Դուռն Ադրիանապօլսոյ»։

Երբ Կ. Պոլիս Օսմանցւոց ձեռքն անցաւ՝ Եմի Գուլէ փոխուեցաւ բանտի, և եթէ տէրութիւնն ո և գժտութիւն ունենալու լինէր ուրիշ տէրութեան մը հետ Եմի Գուլէի մէջ, իսկ եթէ պատերազմ ծագելու լինէր սուլթաններու հրամանաւ, իսկոյն և եթ, ի ներկայութեան բազմութեան, կը կախուէր պատերազմող տէրութեան դեսպանն։ Յիշելով այս պարագայն, մարդ որչափ անհուն փոփոխութիւն կը տեսնէ Թուրքիոյ նախկին և ներկայ զօրութեան մասին։ Առաջ, ինչպէս յիշեցի, կասկածելի դեսպանն իսկոյն կը բանտարկուէր կամ կը կախուէր, իսկ այժմ, այժմ տէրութեան ամենաբարձր պաշտօնատարներն իրենց ոտքով կ՝երթան դեսպաններուն տեսութեան, և Սուլթանն անգամ ճարահատ, իբր համակրութեան նշան, գերմանական ազգային մարշն երգելու ժամանակ ոտքի վրայ կը կենայ նուագածութեան ամբողջ միջոցին, որպէն զի Բիսմարք իշխանին ցոյց տուած լինելով իր կայսերական բարձր համակրութիւնը դէպի գերման ազգն, շահէ զԳերմանիա և իր աշխարհավարութեան կուսակից ընէ զայն։ Երկու րոպէի մէջ անցանք այս պատմական բերդն, որ Օսմանեան տէրութեան վսեմութեան և նսեմութեան կենդանի յիշատակարանն եղած է։ Եւ ահա Պօլսէն մի վերստ հեռու, երկաթուղին կանգ առաւ Ս. Փրկչի Հիւանդանոցի առաջ։ Այստեղ ու այնտեղ կը ծածանէին կարմիր դրօշներ, կամարներ, որոց վրայ կը կարդացուէին՝ «Կեցցէ Ազգն և Ազգային Սահմանադրութիւնն», «Կեցցէ Սուլթան Ա.ապտԻլ Համիտ Խան», «Կեցցէ Յարութիւն Պատրիարք» ոսկետառ խորագիրներն։ Հազարաւոր Հայեր կ՝երթևեկէին Հիւանդանոցի ներսն ու դուրս և պարտէզին մէջ։ Պատարագէն յետոյ, զոր կը մատուցանէր Խրիմեան Հայրիկ, սկսաւ առաջին սեղանն, գեղեցիկ և ընդարձակ վրանի մը ներքև պատրաստուած էր ճաշի սեղան, որոյ մի ծայրին կ՝երևէին Յարութիւն Պատրիարքի և Խրիմեան Հայրիկի պատկերներն։ Հիւանդանոցի աշակերտաք ու աշակերտուհիք և պատսպարեալ ծերերու մի մասն նըստած էին իրենց յատկացեալ սեղաններու շուրջն, և սեղանի մասնակիցներն արդէն գրաւած էին իրենց աթոռներն, երբ, նուագածուաց խմբին առաջնորդութեամբ, Հանդիսավայրն եկաւ Ս. Պատրիարքն, իւր հետ ունենալով Խրիմեան Հայրիկն, եկեղեցականաց և ազգային երեսփոխանութեան ներկայացուցիչներն։ Սեղանի վրայ, պատրիարքի աջ կողմն, նստած էր Խրիմեան Հայրիկ, իսկ ձախ կողմը՝ Տիմոթէոս եպիսկոպոս Սափրիչեան, ապա նոյն կարգաւ Քաղաքական ժողովոյ առենապետ Նուբեան էֆ., Ազգային ժողովոյ Բ. առենապետ Յովհաննէս էֆ. Թորոսեան, իսկ Պատրիարք Հօր Հանդէպ բազմած էին Հիւանդանոցի Հոգաբարձութեան առենապետ և Կ. Պոլսոյ Հայոց առաջնակարգ բարեգործ անձն Մ՝ըքայէլ էֆ. Յակոբեան և պ. Վահրամ Մուրթաֆեան, որ երկու ամիսէ ատ կը գտնուի։Սեղանի կէսին Ս. Պատրիարքն ոտքի ելնելով, ինչպէս նաև բոլոր Հանդիսականները, աղօթեց Վ.Հ. Սուլթանի բարօրութեան և Օսմանեան գահի բարգաւաճման համար և բաժակ առնելով Ն.

վեհափառութեան կենաց և երջանկութեան։ Բոլոր հանդիսականներն բուռն ծափահարութիւններով և ոռանդագին «կեցցէ»-ներով ընդունեցին այս բաժակն։ Նուագածուք այս միջոցին կը հնչեցնէին կայսերական մարշը։ Երկրորդ բաժակն առաջարկեց Յ. Թորոսեան Ամեն. Պատրիարքի կենաց, յայտնելով որ Նորին Ամենապատուութիւնն իւր միամեայ պաշտօնավարութեան միջոցին, չնորհիւ իւր բռնած քաղաքականութեան, լուծեց շատ մը կարևոր խնդիրներ։ Երրորդ բաժակն առաջարկեց Յարութիւն Էֆ. Մէրիէմ Գուլի վասն Սահմանադրութեան և նորա վերաքննութեան։ Մէրիէմ-Գուլի իւր ճառի մէջ յայտնեց, թէ Սահմանադրութեան վերաքննութեամբ, Թուրքիոյ Հայ ժողովուրդն ունի մեծ և օգտաւէտ արդիւնքներ պիտի ստանայ Սահմանադրութենէն, քան որ մինչև այժմ ստացած է և յոյս յայտնեց, թէ մինչև յառաջիկայ տարի այս ժամանակ վերաքննութեան խնդիրն աւարտած կը լինի։ Չորրորդ բաժակն առաջարկեց Ամեն. Խրիմեան Հայրիկ Վեհ. Կաթողիկոսի կենաց և եկեղեցական բարեկարգութեան համար։ «Մինչ մենք այստեղ Սահմանադրութեան խընդրով կ'զբաղինք, անդին Էջմիածնի մէջ ալ Մակար Կաթողիկոսն կը մտադրուի եկեղեցական ընդհանուր ժողով մը գումարելով, ուսումնասիրել Հայաստանեայց եկեղեցւոյ ծիսակատարութեան խնդիրն։ Սակայն մենք գրեթէ միշտ բոլորովին անտեղեակ կը մնանք Էջմիածնայ գործերուն։ Մէկ ընտրութեան ժամանակ կը մտաբերենք կաթողիկոսի գոյութիւնն և կը խառնուինք գործի մէջ, մէկ ալ՝ երբ օր մը յանկարծ լրագիրներու մէջ կը կարդանք, թէ ամենայն Հայոց կաթողիկոսը մեռած է, այս առեն կը մտաբերենք, թէ կաթողիկոս ունէինք եղեր, իսկ միւս ժամանակներն՝ չենք ալ գիտեր կաթողիկոս կայ, չկայ, ինչ կընէ, ինչ չ'ընէր. որուն հոգ։ Ցաւալի երևոյթ մ'է մեր այս անտարբերութիւն։ Էջմիածինն և Էջմիածնի կաթողիկոսութիւնն է, որ գաբերէ ի վեր միացած կապով կը պահէ ամբողջ Հայութեան սիրոն իրար հետ, հետևաբար աշխատելու ենք սերտ յարաբերութիւն պահպանել միշտ մեր և Էջմիածնի մէջ. խմենք այդ կապն իրար հետ միացնող Հանգոյց—Մակար Վեհ. Կաթողիկոսի—կենաց, որպէս զի աւելի ևս հաստատուն կերպիւ ամրացնէ Հայութեան յարաբերական կապը»։ Ապա բաժակներ խմուեցան Պէզճեան Ամիրայի և Ազգ. Հիւանդանոցի միւս հիմնադրաց յիշատակին և Հիւանդանոցի Հոգաբարձութեան կենաց։ Սեղանի վերջին Ամեն. Ս. Պատրիարքն բաժակ առաջարկեց ամբողջ Հայութեան-Թուրքիոյ, Ռուսիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի և այլ տեղերու Հայոց բարօրութեան և երջանկութեան համար։ Այս բաժակ ընդունուեցաւ բուռն ու երկարատև ծափահարութիւններով։ Այդ միջոցին առանձին շոգենաւերով Տարեգարձի Հանդիսավայրն եկան Նիկոմիդիոյ և Ռոդոստոյի Հայերն։ Այդ երկու տեղերու Հայերն, որ առանձին խումբեր կը կազմէին, մին՝ երկու Հարիւր Հոգիէ կազմեալ, իսկ միւս՝ չորս Հարիւր, պատգամաւորութեանց միջոցաւ ներկայացան Ամեն. Ս. Պատրիարքին։ Թէ Նիկոմիդիացւոյ և թէ Ռոդոստեցւոյ շոգենաւերն զարդարուած էին դրօշակներով և դափնիներով, և իւրաքանչիւրն ունէր իւր նուագածուաց խումբն։

Կէս օրուան ժամ $1^1/_2$-ին Պատրիարքն շրջապատեալ եկեղեցականներէ ու երեսփոխաններէ և առաջնորդեալ նուագածուաց խումբէն, գնաց Ս. Փրկչի պարտէզի Հանդիսավայրն, ուր սկսաւ կանոնաւոր կերպիւ Հանդէսն։ Նախ ատենաբանեց Նուբեան Էֆ., բացատրելով Սահմանադրութեան տուած օգուտներն ազգին, յայտարարեց թէ փոքրիկ, գրեթէ աննշան, մի քանի բարեփոխումներ բաւական են, որ Սահմանադրութիւնը լինի այնպիսի մի գործի, որ համապատասխանէ ազգային պիտոյից։ «Սահմանադրութիւնը գործի մ'է, պէտք է որ գործաւորները ճարտար լինին, որպէս զի զայն օգտակար կերպիւ գործածեն։ Սահմանադրութեան հաստատումէն ի վեր արդար գործաւորներ պակաս են»։ Ապա խօսեցան Մէրիէմ-Գուլի, Յ. Թորոսեան և ապա Խրիմեան, որոյ կենդանի խօսքերն յոյժ մեծ տպաւորութիւն գործեցին հանդիսականներու վրայ։ Ժամը 3—4 ին մեկնեցաւ Պատրիարքն, իսկ հանդիսականներն տակաւին մինչև ժամ 6 անդ կը գտնուէին . . .

Երկաթուղւոյ վարչութեան ներկայած հաշուէն կը երևի, որ միմիայն երկաթուղին 10.000-էն աւելի մարդիկ փոխադրած է Նախ-Գուլէ և Հանդիսավայրն։

***

Մի կողմ թողլով մի այլ անկարգութիւն, զոր գործեց ազգային ժողովոյ անդամներէն մին, երբ Խրիմեան Հայրիկ բաժակ կ'առաջարկէր Կաթողիկոսի կենաց, արժան կը համարիմ յիշել մի այլ դէպք, որ անպատուաբեր է Հայ հոգևորականութեան։ Մի քանի օր առաջ՝ երբ կը կատարուէր Հիւանդանոցի 56-րդ տարեդարձի Հանդէսն, Ս. Պատրիարքն բաժակ առաջարկեց Ազգային երեսփոխանութեան կենաց, որոյ ներկայացուցիչն է աստ Եուսուֆեան էֆէնտի, և յարեց, թէ «այդ մաղթանաց մէջ կուզեմ խառնել և Ռուսիաբնակ Հայերն, որոց կողմէ ներկայ կը գտնուի այս սեղանի վրայ մեծ. պ. Մուրթաֆեան»։ Սահմանադրութեան Հանդէսի օրն ևս, երբ Պատրիարքն բաժակ առաջարկելով կը խօսի, միւս կողմէ քանի մը քայլ հեռուն Գատը գիւղի (Քաղքեդոնի) քարոզիչ վարդապետն ծաղրելով Պատրիարքի այն բաժակն, որ առաջարկուած էր Ռուսիոյ Հայոց կենաց, կամաց մը քթի տակէն հեգնութեամբ կըսէ՝ այդ ալ Ռուսիոյ Հայոց կենաց, իսկ քովն կեցած մի այլ վարդապետ ըսաւ, նոյնպէս կամաց. «ոչ թէ Ռուսիոյ Հայոց, այլ սիրահարութեան կենաց» . . .

—

Ազգային ներկայ խնդիրներու մէջ առաջնակարգ տեղ կը գրաւեն մի շարք կրօնաւորական խնդիրներ, որոց ընծայած կարևորութենէն դատելով, կ'ենթադրենք, թէ կրօնաւորաց անձնական խնդիրները մեր ազգային «գոյութեան պայմանը» կը կազմեն, թէ և գոյութեան պայմանի ամեն յատկութիւններէն ևս զուրկ լինին։ Վեց եօթ ամիսներէ ի վեր Ազգային ժողովի և մամուլի մէջ վիճաբանութեան առարկայ է Մելքիսեդեկ Սրբազանին Ամենապատուութեան տիտղոս տալու խնդիրն։ Մի մասը զօրաւոր և պատմական փաստեր յառաջ կը բերէ, թէ Մելքիսեդեկ ըստ օրինի պէտք է կրէ Ամենապատիւ տիտղոսը, միւսն՝ բոլորովին հակառակ կը փաստաբանէ, և այս փոխադարձ հակառակութիւնն այն աստիճան յառաջ տարուեցաւ, որ ընդդիմադիր կուսակցութիւնն գլացաւ տալ Մելքիսեդեկ Սրբազանին այն՝ որուն իրաւամբ արժանի էր։ Ազգային ժողովն կուսակցական ազդեցութեան տակ մերժեց Մելքիսեդեկին շնորհակալութեան քուէ տալու Սպարթալեան բա-

բեզործուԹեանց համար։ ՍպարԹապետեան եղբարք միշտ, երբ մեծ բարեգործուԹիւն մը կատարած են՝ Մելքիսեդեկ Սրբազանի յորդորներու շնորհիւն եղած է գլխաւորապէս։ Այս պարագային հրապարակաւ խոստովանած են նոյն իսկ ՍպարԹապետեան եղբարք։ Այսպէս Իզմիրի ՍպարԹապետեան շինած նշանաւոր հիւանդանոցի առԹիւ Յ. ՍպարԹապետեան իւր արտասանած ճառի մէջ, ի մէջ այլոց, կ'ըսէր. «Մեր Սրբազան Հայր Մելքիսեդեկի հոգեշահ և հայրենասիրական խօսքերը եկան և աւելի ևս բորբոքեցին մեր սիրտն և մեր սիրելի ազգին մշտնջենական ծառայուԹիւն ընելու տենչն» (մայիսի 1879, յունվար 10-ի Թիւոյն մէջ)։ Նոյնպէս երբ վերջերս 20,000 ոսկի տուաւ Իզմիրի նորակառոյց վարժարանի շինուԹեան համար, յայտնեց, Թէ ինքն կը գործէ Մելքիսեդեկ Սրբազանի հոգեշունչ խօսքերէն դրդուած։ Արդ, քանի որ այս բացարձակ յայտարարուԹիւն ընողը նոյն ՍպարԹապետեանն է, մի՛ԹէՀ Ազգային ծողովն, որ ամեն անգամ կը խօսի յանուն ազգասիրուԹեան, յանուն ճշմարտուԹեան և անկողմնակալուԹեան ու անշահասիրուԹեան, մի՛ԹէՀ այդ ազգային ժողովն կուսակցական կրքին այն աստիճան ենԹակայ պիտի լինէր, որ մինչև անգամ գլանար լոկ շնորհակալուԹիւն մը յայտնելու Մելքիսեդեկին, որ նա այդպիսի արդիւնաւէտ և բարեբար ազդեցուԹիւն ունեցած է ՍպարԹապետեանի բարեգործուԹեանց մէջ։

—

Երկար ժամանակէ ի վեր Վան քաղաքը յուզուած է իւր առաջնորդի մի արարքի համար։ ԳողուԹիւն մը երևան հանելու դիտաւորուԹեամբ, Պօղոս Եպիսկոպոս Շէյխի խորհրդով փորձահաց կը կերցնէ մի քանի կասկածելի մարդոց և այլն և այլն։ Առաջնորդի ի գործ դրած այս կախարդական պարագային մեծ յուզում պատճառած է Վանի մէջ։ Վանցիք կը պոռան. «Պօղոս եպիսկոպոս մեր սուրբ կրօնը կ'աղարտէ, հաւատ ընծայելով կախարդուԹեանց և մինչև իսկ մահմետական Շէյխ բերել տալով առաջնորդարան ու նորա խորհրդով փորձահաց կերցնելով մեզ, որպէս զի այն եղանակաւ գողը գտնէ և այլն և այլն»։ Այս խնդիրը այն աստիճան յուզեցաւ, որ Վանի կառավարական դատարանը որոշեց քննել այս պարագային, և իրաւի քննուԹենէն յայտնուեցաւ, Թէ Պօղոս Եպիսկոպոս ի գործ դրած է վերոյիշեալ կախարդական միջոցն։

Հակառակ այս ամեն բացորոշ ճշմարտուԹեանց, Պատրիարքարանն և Կրօնական ծողովը կը չանան հակառակն ապացուցանել և հերքել այդ զրոյցները։ Տարօրինակ է Պատրիարքարանի և Կրօնական ժողովի այս վարմունքն. ինչո՞ւ կուզեն ծածկել զեղծմունք մը, զոր կատարած է առաջնորդ մը Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ։ Զարմանալի է նոյնպէս, Թէ մինչև այժմ Կրօնական իշխանուԹիւնը ինչո՞ւ առաջնորդուԹենէ պաշտօնազուրկ չընէր զՊօղոս Եպիսկոպոս, որ այլ ևս անտանելի դարձած է Վանեցւոց։

—Իաւական ժամանակէ ի վեր աստ կը գտնուի Վահրամ Եպիսկոպոս Մանկունի, և վերջերս նշանակուեցաւ ՕրԹագեղի քարոզիչ։ ՕրԹագեղի քարոզիչ լինելով, Մանկունի, եԹէ ճարպիկ մարդ է, անտարակոյս շուտով պիտի յաջողի Պատրիարքական Թեկնածու լինել, որովհետև այդ գիւղի մէջ կը բնակին Ազգային ծողովոյ ատենապետն, Ազգային ժողովոյ երիսփոխանուԹեան մեծ մասն. հետևաբար Մանկունիի համար կայսրանն հասնելու համար մի մեծ դիւրուԹիւնը բացուեցաւ։ Այժմ կը մնայ շահել այդ երեսփոխանուԹեան սիրտն, այդ ևս դժուարին չէ... ՊատրիարքուԹիւնը վահրամ Եպիսկոպոսի իզձերէն մին եղած է...

Վաղիաֆ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս օրերս մենք առիԹ ունեցանք „Աղբիւրի“ Համբարձումեան վարժարանը տեսնել Շուշեցի տիկին Մարգարիտ Ալեքսանեանի ձեռագիր աւետարանը, որ նա նուիրել է Էջմիածնի Թանգարանին։ Աւետարանը գրուած է չորս տեսակ տպատնճան ձեռագրով, իւրաքանչիւր աւետարանչի գրուածը պէս պէս։ Ամենանուրբ աչքը անդամ չէ կարող տիկնոջ ձեռագիրը զանազանել տպագրուԹիւնից, այնքան զգուշուԹեամբ և այնքան հմտուԹեամբ է գրուած նա ամբողջ հինգ տարուայ ընԹացքում։ Աւետարանի իւրաքանչիւր գլուխը սկսւում է մեծագիր գլխատառներով, որոնք նկարկայացնում են զանազան տարբ կենդանիներ կամ ձկներ։ Իսկ գլուխների մէջի վրքը գլխատառերը զարդարուած են նուրբանկար վրքերիկ ծաղիկներով և փոնջերով։ Գլխագիրը գրուած է երեք լեզուով. Հայերէն, Ֆրանսերէն և Ռուսերէն։ Աւետարանի բոլոր շատ գեղեցիկ նկարուած են չորս աւետարանիչները իրանց առանձին առանձին նշանաբանիներով, իսկ առաջին գլխից յետոյ՝ նկարուած է Յիսուսը նաև վերայ, խաչեալն գիմաց։ Բացի այդ նկարներից, կայ և Շուշի քաղաքի պատկերը, որը նոյնպէս գեղեցիկ կերպով է նկարել աշխատասէր տիկինը։ Կան նոյնպէս և ուրիշ նկարներ՝ աւետարանի բովանդակուԹիւնից վերցրած։ Մի խօսքով գեղագիրը աւետարանը այնչափ հմտուԹեամբ, զգուշուԹեամբ և նուրբ ճաշակով է սկսուած և աւարտուած, որ մարդ մի առանձին զմայլուԹեամբ է նայում նորա վերայ, Թէպէտ կարող է նայել մի շնորհաւոր նրբակրթ գեղեցիկ նկարի վերայ։ Աւետարանը գրուած է գեղեցիկ արծաԹեայ ոսկեզօծ կազմի մէջ, որի երկարուԹիւնն է 10 վերշոկ, իսկ լայնուԹիւնը՝ 6 վերշոկ։ Կազմի առաջին երեսում, չորս անկիւններում քանդակուած են չորս աւետարանիչների պատկերները, իսկ մէջ տեղում՝ Մովսէս մարգարէինը։ Բայց կազմը շինուած լինելով Մոսկուայում, Իւրեքանչիւրի գործատանում, նորա պատկերները քանդակուած են ոչ հայկական, այլ ռուսական եկեղեցական ձևով։ Յարգելի տիկինը կազմի վերայ ծախսել է մօտ 700 րուբլի։ Մեզ հաղորդում էր „Աղբիւրի“ Համբարձումը Թէ, իբրև, փրանսիացի և անգլիացի Ճանապարհորդներ քանիցս անգամ այդ ձեռագրի Համար տիկին Ալեքսանեանին առաջարկել են մեծ գումար, մինչև անգամ մօտ 10,000 րուբլ։ Բայց տիկինը նախապատուել է նուիրել իւր աշխատուԹիւնը էջմիածնի Թանգարանին։

Ամառս 5-ն „Աղբիւրի“ Համբարձումը, բարեպաշտ տիկնոջ յանձնարարուԹեամբ, նորա Թանգագին նուէրը տարաւ էջմիածին, որ յանձնի ըստ պատկանելւոյն։

***

«Արձագանք»-ի 21-ը համարում «Մատենախօս. ակնարկներ» մէջ մտել են հետևեալ սխալները։ Յօդուածի սկզբում «Մմնքիս» պիտի կարդալ «Ամնքիս». առաջին սիւնակի վերջին տողում «հարկաւոր է հմտուԹիւն»,—«հարկաւոր է հմտուԹիւն և զեղարուեստական ճաշակ». երկրորդ սիւնակի 10 տողում՝ «վայրենի և սառնասիրտ»—«բարի, վայրենի և սառնասիրտ»։ Նոյն սիւնակի 41-ը տողում «իզձալը»—«իզձալը»։

ՖԵԼԻԵՏՕՆ

ՍԱՄՈՒԷԼ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ԺԸ.

ՊԱՏԱՆԻ ԱՐՏԱԽԱԶԸ

Երեկոյեան մուէժը բոլորովին պատել էր, բայց Սամուէլը դեռ չէր վերադարձել Սահակին և Պետրոսին ճանապարհ դնելուց: Նրա սենեակում, միայնակ նստած, սպասում էր Ծերունի Աբրաքը, իսկ սենեակի դռանը՝ ոտքի վրայ սպասում էր պատանի Յուսիկը: Երկուսն էլ կորցրել էին իրանց համբերութիւնը: Իշխանը ուշացաւ, բաւական ուշացաւ:

Ծերունին մի քանի անգամ վերկացաւ, ուղղեց ձիթայլին ճրագի պատրոյգը, լոյսը աւելացրեց, լոյսը պակասացրեց, բայց այդ պարապմունքը բաւական չեղաւ նրան զբաղեցնելու, և ձանձրոյթից սկսեց անկիւններում դրած նիզակներն ու զէնքերը համբարել: Այդ հաշիւը, կարելի է ասել, նա հարիւր անգամ տեսել էր, բայց դարձեալ նորից ստուգում էր:

Պատանի Յուսիկը երբեմն ներս էր մտնում, մի որ և է յիմարութիւն էր ասում Ծերունուն, բարկացնում էր նրան, և դուրս էր գալիս:

Բայց իշխանը դեռ չ'երևաց:

Կրկին յայտնուեցաւ Յուսիկը և, կանգնելով Ծերունու առջև, երկու ձեռքերը կանթեց կողքերի վրայ, և մի առանձին հեգնութեամբ ասաց.

—Գիտե՞ս, Աբրաք, դրսումը ինչ տեսայ:

—Ի՞նչ տեսար, սատանայ,—հարցրեց Ծերունին, իւր խոժոռ աչքերը ուղղելով դէպի պատանու խորամանկ երեսը:

—Տեսայ՝ մէկը մի քանի անգամ անցաւ իմ մօտով: Ես կուչ եկայ պատի տակին, նա ինձ չը տեսաւ, և պտոյտ տալով անցաւ: Նա պտըտում էր մեր սենեակների շուրջը և անդադար նայում էր դէպի այս կողմ և դէպի այն կողմ: Երբեմն մօտենում էր, կանգնում էր լուսամուտի ներքև, ականջ էր դնում: Եւ որպէս զի չը նկատեն նրան, նա հեռանում էր և նորից մօտենում էր: Երբ մի անգամ ևս հեռացաւ, ես վազեցի դէպի խոհանոցը, այնտեղից վերառի մի բաւական խոշոր փայտի կոճղ, բերեցի, դրեցի ուղիղ այն գծի վրայ, որտեղից նա մօտենում էր լուսամուտին: Երբ կրկին անգամ եկաւ նա, ոտը դիպաւ կոճղին և մի լաւ գլուխ-կոնծի տուեց բակի սալերի վրայ: Էլ չեմ լմանում, գլուխը կոտրեց, թէ քինեղը, բայց մի խոր «ա՜խ»—«վա՜յ» գոչեց և կաղկաղալով հեռացաւ:

—Հիմայիր ով էր:

—Ինչպէս չիմացայ. ներքինի Բագոսն էր, տիկնոջ ներքինին:

—Այդ անպիտանին սպանելու է. . . . շան նման սատկեցնելու է . . . մռմռաց Ծերունին զայրացած ձայնով:

—Նա իւր վարձը ստացաւ. . . պատասխանեց պատանին և դարձեալ դուրս եկաւ սենեակից:

Ծերունին մնաց միայնակ: Տխուր էր նա, տխուր, որպէս արդար սրտմտութիւն: Ամբողջ կէս դար վկայ էր եղել նա այդ տան լաւ և վատ գործերին, տեսել էր նրա չարն ու բարին, ուրախացել էր նրա բախտաւորութեան հետ, ցաւացել էր նրա դժբախտութիւնների հետ,—բայց երբէք նրա սիրտը այնպէս դառնացած չէր եղել, որպէս այդ վերջին օրերում: Նրան դեռ ևս բոլորովին պարզ չէր, թէ ինչ է կատարվում իւր շուրջը, բայց մի խոսք, ներքին բնազդմամբ զգում էր, որ լաւ բան չէ կատարվում: Մօր լրտեսները շրջապատում են որդու բնակարանը . . . որդին մօրից ծածուկ գործեր է կատարում . . . դիշերները անծանօթ անձինք մտնում են ամրոցը, դուրս են գալիս . . . մարդիկ միմեանց ականջին են խօսում . . . Ի՞նչ էին նշանակում այդ բոլոր կասկածոտութիւնները: Ծերունին լինքն իրան հարց էր տալիս, բայց նրա պարզ և անկեղծ սիրտը մնում էր առանց պատասխանի:

Այդ մտայոգութեան մէջ նստած էր նա և խոժոռ դէմքով սպասում էր, մինչև նախասենեակում լսելի եղան ծանր ոտնաձայներ, դռները յետ գնացին, ներս մտաւ Սամուէլը, իսկ նրա ետևից՝ նրա երկու զինակիրները, որ կանգնեցին դռան աջ և ձախ կողմերում:

—Բարի երեկոյ, սիրելի Աբրաք,—ասաց նա ուրախ ձայնով և մօտեցաւ, ձեռքը դրեց Ծերունու ուսի վրայ, հարցնելով.—Երևի, երկար սպասե՞լ տուի քեզ:

Երիտասարդի ուրախ տրամադրութիւնը փոքր ինչ վանեց Ծերունու թախծոտութիւնները և նա, ծանրացած գլուխը վերբարձրացնելով, հարցրեց.

—Ի՞նչու այդքան ուշացար:

—Հեշտ չէ բարեկամներից ու սիրելիներից շուտով բաժանուելը, յարգելի Աբրաք,—կերանք, խմեցինք, համբոյրուեցանք, բաժանուեցանք, դարձեալ մօտեցանք, դարձեալ համբոյրուեցանք, և այդպէս, կրկնելով ու կրկնելով, արևը մտացրինք, օրը մաշեցինք . . .

Նա դարձաւ դէպի զինակիրները և ձեռքը շարժեց:

Նրանք գլուխ տուին և հեռացան: Ներս մտաւ Յուսիկը, կանգնեց նրանց մէկի տեղում:

—Հիմա ասա, Աբրաք, մօրս մօտ եղե՞լ ես,—հարցրեց նա և անցաւ, յոգնած կերպով պառկեց իւր գահաւորակի վրայ:

—Եղել եմ,—պատասխանեց Ծերունին,—երկու անգամ:

—Ո՛չ, երեք անգամ,—ընդմիջելով ուղղեց Յուսիկը:

—Հա՛, մեղայ Աստուծոյ, երեք անգամ,—շարունակեց Ծերունին, ծուռ կերպով նայելով պատանու երեսին.—մէկ անգամ առաւօտեան, մէկ անգամ կէսօրին . . .

—Մէկ անգամ էլ երեկոյեան,—ծիծաղելով աւելացրեց Սամուէլը:

—Հա՛, մէկ անգամ էլ երեկոյեան,—կրկնեց Ծերունին, զարմանալով, թէ ինչ մի ծիծաղելու բան կար այդ հաշուի մէջ:

Սամուէլը փոքր ինչ խմած էր, եթէ ոչ, նա երբէք սովորութիւն չունէր կատակներ անել իւր դայեակի հետ, որին չափազանց յարգում էր: Նկատելով Ծերունու վշտանալը, փոխեց նա իւր հեգնական եղանակը և բոլորովին լուրջ կերպով հարցրեց.

—Ուրեմն եղել ես մօրս մօտ: Դէ, պատմիր, ինչ պատրաստութիւններ է տեսել իմ ճանապարհորդութեան համար: Ես առաւօտեան պէտք է գնամ, անպատճառ պէտք է գնամ . . .

—Մօրդ ցանկութիւնն էլ հէնց այդ է, որ առաւօտեան գնաս,—պատասխանեց Ծերունին և, վերկենալով իւր տեղից, մօտեցաւ երիտասարդի գահաւորակին, նստեց նրա ներքև, գորգի վրայ, որպէս զի իւր ձայնը աւելի լսելի լինի:—Նա ամեն ինչ պատրաստել է տուել քո ճանապարհորդութեան համար: Յիսուն երիտասարդներ, միագոյն-կապուտակ նժոյգների վրայ նստած, ամենքը ար-

ծաքեայ զէն ու զարդով, կուզեկցեն քեզ: Տասն զոյգ մոյզ-զեղնադոյն ջորիներ կը տանեն վրաններըը, պաշարեղէնը և հանդերձեղէնի ջամատաններըը[1]: Երկու սպիտակ ջորիներ կը տանեն իշխանական կառքը: Քսան ոսկեզոյն նժոյգներ պատրաստ կը լինեն իբրև հետակներ: Այդ նժոյգների փառաւոր ասպազէնքը տիկինը իւր գանձարանից է ընտրել: Բացի յիսուն երիտասարդ թիկնապահներից, քեզ հետ կը լինեն եօթն դինակրներ, եօթն բադեակրներ, եօթն բարակապահներ (շնապահներ) և երկու խոհարար: Գինին, զանազան տեսակ օշարակներ, զանազան տեսակ քաղցրաւենիք և անուշեղէններ, իրանց կարգով, դարսած են առանձին արկղների մէջ: Պատահայ ասել, որ յիսուն թիկնապահների թւում կը լինի և մի սպայ, որ կը տանէ իշխանական դրօշը և մի խումբ թմբկահարներ ու փողարներըը:

Այդ հաշուի մէջ Արբակը չը սխալուեցաւ, որովհետև երբեմն նայում էր մի գրուածքի կտորի վրայ, որ ձեռքումը բռնած ունէր: Երբ աւարտեց, Սամուէլը նկատեց.

—Բաւական փառաւոր պատրաստութիւն է, միայն խիստ ծանր է . . . Ես կը ցանկայի, որքան կարելի է, թեթեւ լինէր իմ ասպախումբը . . .

—Պայմդ դանկացել է, որ քո հօր և քո անունին պատշաճ լինի քո ասպախումբը . . . —պատասխանեց Ներուէնին մի այնպիսի ձայնով, որի մէջ լսւում էր և նրա դառն տհաճութիւնը:

—Իսկ իմ մարդիկներից ո՞ւմն է նշանակել:

—Ոչ ոքի: Այդ թողել է քո կամքին, ումը կամենաս, կարող ես վերառնել քեզ հետ:

—Իսկ դու, սիրելի Արբակ, չե՞ս գալու ինձ հետ:

—Արբակը քեզ ետը է միայնակ թողել, որ այժմ թողնէ: Նրա գլուխը պէտք է այդ շէմքի տակ թաղուի[2]:

Նա ձեռքը տարաւ դէպի Սամուէլի սենեակի շէմքը:

Պատանի Յուսիկը կանգնած էր պատի մօտ և իւր փայլուն աչքերով երբեմն նայում էր իւր տիրոջ վրայ և երբեմն Ներուէնի Արբակի վրայ: Նա անհանգիստ էր, և անհամբերութեամբ սպասում էր գիտենալ, արդեօք իւր տէրը իրան էս կը տանէ՞ իւր հետ: Նրա ուրախութիւնը անչափ եղաւ, երբ Սամուէլը դարձաւ դէպի Ներուէնին, ասելով.

—Չնորհակալ եմ իմ մօրից, որ իմ մարդիկների ընտրութիւնը թողել է իմ կամքին: Ես բոլորին պէտք է ինձ հետ տանեմ: Կը հրամայես, սիրելի Արբակ, որ ամենքը առաւօտեան պատրաստ լինեն:

—Ես արդէն պատուիրել եմ,—պատասխանեց Ներուէնին:

Այդ միջոցին առաջ անցաւ պատանի Յուսիկը և կարմրելով ասաց.

—Մի խնդիրք ունեմ, տէր իմ:

—Խօսի՛ր:

—Իմ ձիու մի ոտքը պայտելուց կաղում է:

—Արբակը կը հրամայէ, որ իմ ախոռատնից քեզ տան այն ձին, որը դու հաւանելու լինես:

Պատանու դէմքը փայլեց ուրախութիւնից:

Արբակը վերկացաւ:

—Ո՞ւր,—հարցրեց Սամուէլը:

—Դեռ ևս պակաս բաները շատ կան, գնում եմ կարգի դնելու . . .

—Չնորհակալ եմ, սիրելի Արբակ, ես առաւօտեան վաղ, շատ վաղ պէտք է ճանապարհ ընկնեմ:

Ներուէնին գլուխը խորհրդաւոր կերպով շարժեց և, առանց իւր եռևը նայելու, դուրս գնաց սենեակից:

Նրա հեռանալուց յետոյ, Սամուէլը աւելի ուրախ էր: Իւր ճանապարհորդութեան պատրաստութիւնները, թէև ոչ բոլորովին, բայց մասամբ աւելի նպատակայարմար էին կարգադրուած: Նա այդքանն ևս չէր սպասում իւր մօրից: Նա սպասում էր փառաւորութիւն, շքեղութիւն, բայց չէր սպասում, որ մայրը թոյլ կը տար նրան՝ իւր մարդիկը իւր հետ տանել: Իսկ Սամուէլի մարդկանց թիւը աւելի շատ էր, քան մօր նշանակածները:

Նա այժմ ուրքի վրայ անցուդարձ էր անում իւր սենեակում և, ձեռքերը եռանդով շփելով, ինչ-որ հաշիւներ էր անում իւր գլխում: Պատանի Յուսիկը, նկատելով նրա ուրախ տրամադրութիւնը, համարձակութիւն ստացաւ մի այլ խնդիրքով ևս դիմելու իւր տիրոջը: Բայց այս անգամ տատանւում էր նա, և նրա ճարպիկ լեզուն, որ խօսքի եռևից մանգալու սովորութիւն չունէր, այս անգամ պապանձուել էր: Ամօթխածութիւնից գլուխը խոնարհեցրած, երբեմն թեքվում էր աջ ոտի վրայ, երբեմն ձախ ոտի վրայ, և մի-մի անգամ ձեռքը տանում էր, ականջի եռևը քորում էր: «Ասե՞մ, թէ չասե՞մ» . . . այդ երկու բառերն էին պտրտվում նրա յուզուած գլխում:

Եթէ Սամուէլը դոնէ մի անգամ նայելու լինէր խեղճ պատանու վրայ, իսկոյն կը նկատէր նրա անհանգիստ դրութիւնը, բայց Սամուէլը յափշտակուած էր իւր քաղցը խոկումներով և նրա վրայ ամենևին ուշադրութիւն չէր դարձնում:

Մի քանի անգամ հազաց պատանին: Նրա կեղծ, խրամանկ հազը դրաւեց Սամուէլի ուշադրութիւնը, որ, նայելով նրա շփոթուած երեսին, հարցրեց.

—Այլ ևս ի՞նչ ասելիք ունես:

—Ի՞նչպէս ասեմ . . . տէր իմ . . . աչքերը դէպի ցած խոնարհեցնելով, մրմնջաց պատանին:

—Այնպէս ասա, ինչպէս միշտ սովորութիւն ունես ասելու,—խօսեց իշխանը ծիծաղելով:—Ի՞նչից ես ամաչում:

Տիրոջ ծիծաղը ամրացրեց պատանու վստահութիւնը և նա հեկեկալով ասաց.

—Այսօր ամբողջ օրը լաց էր լինում «նա» . . .

—Ո՞վ, Նուաձրդը:

—Այո՛, տէր իմ:

—Ի՞նչու էր լաց լինում:

—Նա իմացել է, որ ես գնալու եմ իմ տիրոջ հետ...

—Եւ տխրո՞ւմ է:

—Ո՛չ, տէր իմ: Ես խօսք էի տուել . . .

—Ի՞նչ խօսք էիր տուել:

—Որ այդ օրերում . . .

—Կը պսակուէք: Այդպէս չէ՞:

—Այո՛, տէր իմ:

—Չիմա ի՞նչ ես ուզում.—կամենում ես մնա՞լ, պսակուե՞լ:

—Ո՛չ, տէր իմ, ես նրան դեռ նշան էլ չեմ տուել:

Սամուէլը, մի փոքր մտածելուց յետոյ, հանգստացրեց նրան, ասելով.

—Գու քո խոստմունքի կէսը այժմ կարող ես կատարել: Նշանը կը տաս, իսկ պսակուելը կը մնայ մեր վերադառնալուց յետոյ: Դեռ ևս չը գիտեմ, թէ երբ կը վերադառնանք . . . Բայց երբ էլ որ լինի, ես քեզ անպատճառ պսակել կը տամ Նուարդի հետ: Նա լաւ աղջիկ է, նա այդ օրերում մի քանի լաւ ծառայութիւններ արեց ինձ, և այդ պատճառով, իմ կողմից առանձին վարձա-

տրուքեան արժանի է: Երբ Արբակը կը գայ, կասեմ նրան, որ իմ գանձից տանէ նրա համար ամենաթանդագին նշանները:

Խեղճ պատանին չը գիտէր՝ որպէս յայտնել իւր շնորհակալութիւնը: Ուրախութեան արտասուքը աչքերում, մօտեցաւ, ընկաւ իւր տիրոջ ոտքերը, կամենում էր համբուրել: Սամուէլը հեռացրեց նրան, ասելով.

—Վերկաց, որքան Նուարդը լաւ աղջիկ է, այնքան և դու լաւ սպասաւոր ես:

Այդ միջոցին դռները շառաչմամբ յետ գնացին, ներս վազեց պատանի Արտաւազդը, Մամիկոնեան Վաչէի որդին[3]: Նա գրկեց Սամուէլի պարանոցը և, դեղեցիկ դլուխը դնելով նրա երեսի վրայ, խորին հրճուանքով բացականչեց.

—Ա՜խ, եթէ գիտենայիր, Սամուէլ, որքան ուրախ եմ . . . որքան ուրախ եմ . . . չեմ կարող պատմել . . .

—Այդ ինչն է այդքան ուրախացրել քեզ,—հարցրեց Սամուէլը, դժուարութեամբ ազատուելով աշխոյժ պատանու գրկից:

—Նստենք, կը պատմեմ: Սաստիկ յոգնել եմ, սաստի՛կ...

Երկուքն էլ նստեցին բաղմոցի վրայ: Պատանին մինչև ականջները կարմրել էր: Երևում էր, որ իրանց տանից մինչև Սամուէլի բնակարանը անդադար վազելով էր եկել: Մի փոքր շունչ առնելուց յետոյ, խօսեց.

—Այս առաւօտ միայն ինձ ասեցին, որ դու գնալու ես հօրդ դիմաւորելու: Փոաճեցի. ինչու սկեսրայր է Սամուէլը գնայ, իսկ ես չի պիտի գնամ: Իսկոյն վազ տուի Մուշեղի մօտ, ձեռքը համբուրեցի, ոտքը համբուրեցի, վերջապէս, նրա հաճութիւնը առի: Յետոյ վազ տուի քո մօր մօտ. նրա էլ դլխից սկսած մինչև ոտքերը համբուրեցի: Նա էլ կամք տուեց: Մնում էր իմ մայրը: Դրան համբոյրներով համոզել՝ փոքր ինչ դժուար էր: Ջօռ տուի լեզուիս: «Գիտէս, ասեցի, Պերուժանը գալիս է, Վահանը գալիս է. նրանց հետ լինելու են պարսից թագաւորի մեծամեծ զօրապետները. պէտք է երևալ բանակի մէջ, պէտք է ցոյց տալ իրան: Այնտեղ հաւաքուելու են բոլոր նախարարների որդիները: Ես ոչինչ եմ պակաս, թէ իմ նետ նետելով և թէ իմ նիզակ շարժելով» . . . Մի խօսքով, էլ բան չը մնաց, որ չասեցի: Դու գիտես, որ մայրերը փառասէր են լինում, մանաւանդ որդիների վերաբերութեամբ: Նա բարեհաճեց, որ ես էլ երևամ նախարարների որդիների մէջ և զարմացնեմ պարսիկներին: Լաւ չեմ սարքել:

—Վատ չէ, պատասխանեց Սամուէլը,—թէև սուտեր շատ ես խօսել:

– Ոչ, Աստուած է վկայ, սուտ չեմ ասել, բայց մի փոքր պարծեցել եմ,—ասաց պատանին, աւելի կարմրելով: – Ի՞նչ պէտք է անէի, մարդ ուզում է՝ դուրս գայ, աշխարհ տեսնէ, բայց դլանք, կոյր աղջկայ նման, հէնց տանն են պահում: Ես իսօ պստիկ չեմ, մի տարի էլ անցնի, բեխերս դուրս կը գան . . . Այն ժամանակ կասեն՝ «դու մարդ ես» . . . Չիմա ինձ մարդու տեղ չեն դնում . . . Այս գիշեր չեմ քնելու,—խօսքը փոխեց նա,—մինչև լոյս չեմ քնելու: Երբ առաւօտեան տեղ եմ գնալու, գիշերը քունս չէ տանում: Պէտք է ամեն ինչ պատրաստել տամ, ամեն ինչ . . .

Այդ շատախօս պատանին, որին առաջին անգամ տեսանք Մուշեղ իշխանի պարտէզում, համազօտ մանուկի հետ նետաձգութեան վորձեր անելիս,—այդ կեանքով և կրակով լի պատանին, ոչ սակաւ յարգելի պատճառներ ունէր մասնակցելու Սամուէլի արշաւանքին: Բայց Սամուէլին սկսեց անհանգստացնել այն միտքը՝ արդեօք այդ անվորձ և պարզամիտ մանուկը իրան չէը խանգարի . . . արդեօք նա մի անխուսափելի ծանրութիւն չէը դառնայ իւր համար . . . Այդ տարակուսանքներն էին պատճառը, որ Սամուէլը դժուարացաւ պատասխանել, երբ պատանին, նրա երկու ձեռքերը առնելով իւր ափերի մէջ, մօտեցրեց իւր շրթունքներին, հարցնելով.

—Բոլորի հաճութիւնը ստացել եմ, սիրելի Սամուէլ, մնում ես դու, ասա, յօժա՞ր ես, որ ես էլ գամ քեզ հետ:

Երբ Սամուէլը իւր պատասխանը ուշացրեց, նա աւելացրեց, ասելով.

—Եթէ դու չը համաձայնուես, ես առանց քեզ էլ կը գնամ . . .

Պատանու ինքնավստահութիւնը փոքր ինչ չափազանց էր: Բայց Սամուէլին յայտնի էր նրա անսանձ, անդուսպ բնաւորութիւնը: Իրաւ, եթէ Սամուէլը նրան իւր հետ տանելու չը լինէր, նա այնպէս էլ կը գնար:

Մի միտք ծագեց Սամուէլի գլխում. «գա ինձ հարկաւոր կը լինի» . . . և խոհոյն գրկեց նրան, ասելով.

—Մի վշտացիր, սիրելի Արտաւազդ, դու իմ սպասխումբի զարդը կը լինես, ես առանց քեզ մի քայլ անգամ չեմ փոխի, գնա, պատրաստուիր:

Պատանին վերկացաւ և, ուրախութիւնից մոռանալով, մինչև անգամ, բարի գիշեր ասել, դուրս վազեց սենեակից: Նախասենեակում լապտերը ձեռին սպասում էր նրա ծառան: Նա շտապելով թողեց ծառային և անցաւ: Ծառան լապտերը տանում էր նրա ետևից և դժուարանում էր հասնել:

Երեք օր անցել էր այն գիշերից, որ երկու սուրհանդակները մտան Ողական ամրոցը, բերելով Տիսպոնի բոթը:

Երեք օրից յետոյ դուրս եկան Ողական ամրոցից երկու եղբօր որդիները.—

Սամուէլը առաւօտեան, իւր փառաւոր սպասխումբով, հանդիսաւոր կերպով,

Իսկ Մուշեղը գիշերով, միայն երկու զինակրների հետ, գաղտնի կերպով . . .

(Կը շարունակուի) ՐԱՖՖԻ:

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՒ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԿԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, համաձայն բարձրագոյն հաստատած քաղաքային կանոնադրութեան 17 և 22 յոդ. և այս տարուայ մայիսի 5-ին կայացած քաղաքային Խորհրդի որոշման, հրաւիրում է պ. պ. տանտէրերին, որոնք ցանկանում են մասնակցել առաջիկայ քաղաքային չորս (1887—1890 թ.) տարի ժամանակով ընդհանուր ընտրութիւններին, ներկայացնել անմիջապէս քաղաքային գանձարանին մինչև այս տարուայ յունիսի 31-ը իրենց կալուածքերի վերայ մնացած գնահատութեան հարկի ապառիկ դրամները: Քաղաքային վարչութիւնը այսու յայտարարում է, թէ այն անձինք, որոնք նշանակեալ ժամանակամիջոցին լիովին չեն ներկայացնիլ իրենց վերայ մնացած ապառնիկները, ընտրողական ցուցակների մէջ չեն նշանակուիլ: 3 – 2

Дозв. Ценз. Тифлисъ, 7 Іюня 1886 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.